

ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է ՀՀ Ազգային ժողովում կայացած բյուջետային քննարկմանը

30.10.2013



ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը 2013 թվական հոկտեմբերի 29-ին մասնակցել է ՀՀ Ազգային ժողովի Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի և Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստին, որտեղ քննարկվում էր «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին նախատեսված միջոցների հարցը: Է.Ղազարյանի կողմից ներկայացվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին, մարզային ենթակայության կազմակերպություններին և մարզի համայնքների նախատեսված միջոցները և պետական ծրագրերը: